

**ՀՀ Տավուշի մարզպետ Հայկ Չոբանյանի հարցազրույցը lurer.com կայքի հետ
26.02.2019**

Մոտ մեկ ամիս առաջ ՀՀ Տավուշի մարզպետ նշանակվեց Հայկ Չոբանյանը: Ի տարբերություն նոր կառավարության շատ ու շատ այլ նշանակումների, այս դեպքում գրեթե քննադատություններ չհնչեցին: Կարծես Չոբանյանի նշանակումը ողջունվեց, մարդիկ հույսեր կապեցին նրա հետ:

[Lurer.com](http://lurer.com) ի հետ գրույցում նորանշանակ մարզպետը կարծիք հայտնեց, թե Հայաստանի զարգացումը պետք է մարզերից սկսվի, իսկ Տավուշն ամենամեծ ներուժ ունեցող տարածաշրջանն է:

-Կադրային փոփոխություններ կատարե՞լ եք մարզպետարանում կամ առաջիկայում պատրաստվո՞ւմ եք իրականացնել:

- Արդեն առիթ եմ ունեցել հայտարարելու, որ նպատակ ունեմ լավագույն մասնագետներին ներգրավել մարզի զարգացման ծրագրերում և նախաձեռնություններում: Կարծում եմ՝ դանդաղ, բայց հաջողվում է: Նվիրված և պրոֆեսիոնալ մարդկանց կարիքը շատ ունենք: Առաջիկայում սպասվում են կառուցվածքային փոփոխություններ բոլոր մարզպետարաններում, այդ թվում՝ նաև Տավուշում:

- Ինչպե՞ս կգնահատեք նախկին մարզպետի աշխատանքը: Նա հասցրե՞լ է ինչ-որ բան անել մի քանի ամիսների ընթացքում:

- Նախկին մարզպետը միևնույն քաղաքական ուժի ներկայացուցիչ է եղել և փորձել է առավելագույնս լուծել մարզի առջև դրված խնդիրները: Անշուշտ, ունեցել է հաջողություններ: Ես փորձում եմ ավելի համակարգային լուծումներ ներդնել՝ առավել արդյունավետություն և կայուն զարգացում ապահովելու համար:

-Հասցրե՞լ եք ծանոթանալ մարզի խնդիրներին: Որո՞նք են առաջնային լուծում պահանջող խնդիրները և որո՞նց լուծմանն եք արդեն իսկ ձեռնամուխ եղել:

- Մարզի բոլոր հիմնական խնդիրները ձևակերպված են, նրանց լուծումներն են ձևակերպվում: Բոլորն առաջնային են, աշխատում ենք զուգահեռ:

-Ի՞նչ նախաձեռնություններ, ծրագրեր ունեք առաջիկայում՝ մարզը զարգացնելու համար: Ի՞նչ ծրագրեր եք նախատեսում իրականացնել սահմանամերձ համայնքներում:

-Կարելի է գիրք գրել Ձեր այս հարցին ի պատասխան: Կարծում եմ՝ հաջողվում է համախմբել հիմնական ռեսուրսները: Ծրագրերը բաժանում ենք ըստ ոլորտների և առաջնահերթությունների, ստեղծում ենք նոր հարթակներ, սերտորեն աշխատում ենք գործարար համայնքի հետ, ձևավորում ենք պետություն-մասնավոր համագործակցության և վստահության միջավայր: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ծրագրերի ապագա կայունության և կենսունակության ապահովման վրա:

Սահմանամերձ համայնքները Տավուշի մարզի պարագայում գրեթե ամենուր են: Արդյունքում մենք առնչվում ենք անվտանգության, տնտեսական զարգացման, սոցիալական ապահովության հատուկ իրավիճակների, որոնք պահանջում են հատուկ դիվերսիֆիկացված քաղաքականություն: Երկու հիմնական բաղադրիչները տնտեսությունն ու անվտանգությունն է, թիվ մեկ արդյունքը՝ ժողովրդագրական ցուցանիշների բարելավումը:

- Ի՞նչ խնդիրների եք բխսվել Ձեր պլաններն իրականացնելիս:

-Երկու մարտահրավեր կա՝ բավարար քանակությամբ պրոֆեսիոնալ, նվիրված և գործունյա մարդկանց գտնելն ու ներգրավելը, ինչպես նաև շատ կարծրատիպեր ջարդելը:

- Ձեր հարցազրույցներից մեկում ասել եք՝ Հայաստանում կան ոլորտներ, որոնք չեն ռեալիզացվում, երբ դրա հնարավորություններն անսահմանափակ են: Տավուշի մարզում ո՞ր ոլորտները կմարտնանշեք:

- Ցավոք, մարզում չկա որևէ ոլորտ, որը ռեալիզացված է գոնե պոտենցիալի կետով: Գյուղատնտեսության տվյալները բազմապատիկ զիջում են նույնիսկ խորհրդային տարիների տվյալներին, այն դեպքում, երբ անցած երեսուն տարիների ընթացքում գյուղատնտեսության արտադրողականությունն աշխարհում ավելացել է կարգով: Վերամշակումն ավելի վատ վիճակում է: Օրինակ, ամբողջ մարզում կաթի մթերման և վերամշակման լուրջ գործարան չկա և այլն: Առավելագույն և երկարաժամկետ փոփոխությունների ապահովման համար համակարգային լուծումների ապահովումն է, այլապես՝ հատիկ-հատիկ լուծումներ տալու համար ժամանակ և ռեսուրս չունենք:

-Պարո՞ն Չոբանյան, մինչ մարզպետ դառնալը Դուք զբաղվում էիք Հայաստանում արևային էներգետիկայի զարգացմանը միտված գործունեությամբ և բավականին լավ եք պարկերացնում շուկան: Ի՞նչ եք կարծում՝ հնարավո՞ր է այն գերակա ճյուղ դարձնել Տավուշում, մարզը դարձնել արևային էներգետիկայի կենտրոն և, օրինակ, ծրագիր մշակել, որով պանելներն անվճար կտրամադրվեն սոցիալապես անապահով բնակիչներին: Նման ներդրումային ծրագիր նախատեսվո՞ւմ է:

- Էներգիաարդյունավետությունը մեր տնտեսական գերակայություններից մեկը պետք է դառնա, որովհետև դա ոչ միայն հնարավորություն է տալիս գումար տնտեսելու, այլև տնտեսական կամ բիզնես ոլորտում հնարավորություն է տալիս էապես ազդելու ապրանքի ինքնարժեքի վրա և դրանով ավելի մրցունակ դարձնելու ապրանքը: Դա վերաբերում է ցանկացած տնտեսությանը, արտադրությանը: Այս առումով, անշուշտ, դա պետք է լինի գերակա ուղղություն նաև Տավուշի մարզում համատարած օգտագործմամբ և՛ տնտեսական ոլորտում, և՛ անհատական ոլորտում, և՛ պետական համակագում:

Այո՛, այս պահին արդեն կան ներդրումային առաջարկություններ, դեռևս չենք կարող խոսել դրա ժամկետների մասին, բայց կարծում եմ՝ առաջիկա մի քանի ամիսների ընթացքում մենք արդեն նորություն կունենանք և հունիսին նախատեսվող բիզնես ֆորումի ժամանակ այդ ծրագրերը ևս կներկայացվեն: